

## Ալավերդի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդ – վաճառքի մասին

### Տիպ` [Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ](#)

Հայտատու` Ալավերդու համայնքապետարան

<<Հրապարակային սակարկությունների մասին>> ՀՀ օրենքի 5-րդ հոդված 2-րդ կետ

ՀՀ Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանում <<30>> մարտի 2021թ. ժամը 12:00-ին տեղի կունենա համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդ – վաճառք կառուցապատման նպատակով` 2 լոտով:

Վաճառվում է`

Լոտ 1. Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Երևանյան խճուղի, N 33/1 հասցեում գտնվող, այլ գործառնական նշանակության, 20,8 քմ մակերեսով հողամաս, 06-002-0629-0074 ծածկագրով, 62400 դրամ մեկնարկային գնով` հասարակական օբյեկտ կառուցելու համար:

Լոտ 2. Համայնք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, N 2/28-39/1 հասցեում գտնվող, բնակելի կառուցապատման նպատակով, 37,5 քմ հողամաս, 06-002-0150-0374 ծածկագրով, 93750 դրամ մեկնարկային գնով` ավտոտնակ կառուցելու համար:

Աճուրդի մասնակցության վճարը սահմանված է 15000 դրամ, աճուրդի քայլի չափը` մեկնարկային գնի 5%:

Կառուցապատվող հողամասերի համար աճուրդի հաղթողին տրամադրվում է ճարտարապետահատակագծային առաջադրանք:

Հողամասի նկատմամբ սահմանափակումներ չկան:

Հողամասերի հարևանությամբ գոյություն ունեն ավտոճանապարհներ, ջրատարներ, կոյուղիներ, էլեկտրահաղորդման գծեր և գազատարներ:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին` մինչև 2021թ. մարտի 26-ը, ժամը 16:00-ն:

Աճուրդի պայմանների մանրամասներին` հողամասի ելակետային տվյալներին, ճարտարապետահատակագծային առաջադրանքի պահանջներին և պայմաններին, հողամասի հատակագծին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Ալավերդու համայնքապետարան, (ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկ 8/1, հեռ.՝ /0253/2-41-00):